

Լ. Վ. ՇԱՀՄԱՆՅԱՆ

ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Հայրական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Տեխնիկական գիտությունների բաժանմունքը շնորհակալ գործ է կատարել հրատարակության հանձնելով ամենօրյա կյանքում այնքան պահանջ դարձած «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանը»: Գ.Ա. Տեխնիկական գիտությունների բաժանմունքը սկսած 1946 թ. աշխատանք տանելով հայերեն տեխնիկական տերմինների թարգմանության, ճշտման և կազմման ուղղությամբ, որը մի կողմից պետք է համապատասխաներ Միավիճակյալ Գ.Ա. Տեխնիկական տերմինոլոգիայի կոմիտեի առաջադրած պահանջներին, իսկ մյուս կողմից ապահովեր ուսուցիչից հայերեն կատարվող անսխալ թարգմանությունը, հետադառնում ավելի ճիշտ ուղղություն վրա կանգնեց՝ կազմելով վերը նշած պոլիտեխնիկական բառարանը:

Հայերեն լեզվի բառային ֆոնդը Հայաստանում սովորական կարգերի հաստատման ժամանակաշրջանում գիտություն ու տեխնիկայի աննախընթաց զարգացման համապատասխան հարստացել է՝ լրացվելով բազմաթիվ տեխնիկական նոր տերմիններով: Այդ ժամանակաշրջանում լույս տեսած մի քանի հայերեն մասնագիտական բառարանները չէին կարող ոչ իրենց ծավալով և ոչ էլ իրենց գիտական-բացատրական մակարդակով բավարարել այն հակադրան պահանջները, որը ներկայումս առաջադրում է սոցիալիստական ընդլայնված արտադրությունը, արդի տեխնիկան ու օրավուր զարգացող գիտությունը: Սակայն, ինչպես այդ մասնագիտական բառարաններում արված, այնպես և գիտություն ու տեխնիկայի բնագոյում ինքնուրույն ու թարգմանական աշխատություններում օգտագործված հայերեն տեխնիկական տերմինները լայն հնարավորություն էին բնօրինակ կազմելու հայերեն պոլիտեխնիկական բառարանը: Հայերեն լեզվով պոլիտեխնիկական բառարանի կարիքը ներկա պայմաններում վերին աստիճանի մեծ է դարձել: Այն ժամանակ, երբ հայերեն լեզվով օգտագործում են տեխնիկայի բազմազան ճյուղերին վերաբերող տասնյակ անուն գրքեր ու բրոշյուրներ, թարգմանվում սուսական տեխնիկական գրականությունից բազմաթիվ աշխատություններ, հայերեն պոլիտեխնիկական բառարանը կհանդիսանա որպես հիմնական մի ձևանակ գրականություն մեջ թույլ արվող ոչ ճիշտ տերմինների վերացման համար: Նման բառարանի կարիքը մեծ էր նաև տեխնիկական բարձրագույն ուսումնական հաստատություններում, տեխնիկումներում ու մասնագիտական ուսումնարաններում՝ դասավանդումը ավելի խորը հիմունքների վրա դնելու, տերմինների միջոցնախություն ստեղծելու, ինչպես և ուսսական տեխնիկական գրականություն օգտագործման ղեկավարում այն ավելի մատչելի դարձնելու համար: Ահա թե ինչու ներկայումս արդեն հրատարակված «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանը» չնայած իր համեմատաբար ոչ մեծ ծավալին և լիակատար լինելուց հետո գտնվելուն նշանակալի երևույթ է մեր տեխնիկական կյանքում:

Բառարանը պարունակում է 25000 տերմին և տերմինալին կապակցություն: Այստեղ բառ-տերմիններից բացի գեանդված են նաև երկու և ավելի բառերից կազմված միացյալ տերմիններ, ամականի կամ դոյականի կոկնություն, որոնք բնորոշ են տեխնիկայի այս կամ այն ճյուղին: Նրանում բերվող բառանյութը վերաբերում է թվով երկու տասնյակից ավելի մասնագիտությունների: Լճարկի, տեխնիկական ոչ բոլոր մասնագիտություններին վերաբերող տերմիններն են ընդգրկված բառացանկի մեջ, սակայն հաշվի առնելով բառարանի ոչ սովոր լինելը, պետք է առաջիկ հաշտվել ներկա դրությամբ հետ:

Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան ստեղծելու աշխատանքը կապված է բավականին դժվարությունների հետ: Նախ, հարկավոր էր տեխնիկայի տարբեր ճյուղերին վերաբերող գեանյութից դոյություն ունեցող տերմինները, որոնք օգտագործվում էին գրականություն մեջ կամ խոսակցական լեզվում, բառարանային մշակման ենթարկել միօրինակություն մացնելով տարբեր մասնագիտություններում օգտագործվող համանման երանց ունեցող տերմինների մեջ, կանխեղանելով նրանց նշանակությունները: Այնուհետև, անանհրաժեշտ էր միօրինակություն մացնել ուսանողներից թարգմանված, սակայն մեր գրականություն մեջ, ինչպես և եղած հայերեն մասնագիտական բառարաններում տարբեր իմաստավորում ստացած, տերմինների մեջ: Հասուկ ուշադրություն էր արժանի օտար տերմինների ճիշտ գործածության հարցը, դրանք հայերեն առաջարկությունը օգտագործելու, թե թարգմանաբար տրվելու կապակցությամբ: Վերադարձից գատ առանձին կարևորություն էր ներկայացնում տերմինոլոգիական աշխատանքը սկզբունքորեն ճիշտ ուղու վրա դնելու հարցը, որպեսզի ուսանողներն բազմաթիվ տերմինների հայերեն համարժեքներ ստեղծելու խոստովիր տերմինի բազմիմաստությունից, ինչպես և տերմինների իմաստային զուգահեռականություն ստեղծումից: Եվ վերջապես, պետք է հազվադեպի այն որոշակի դժվարությունները, որոնք հանգես են գալիս հատկապես ուսանողներ իրար մոտ տերմինների իմաստային երանգները արտահայտող տերմինների ստեղծման կամ եղածների վերաճշտման դեպքում: Ահա հարցերի այն ոչ լրիվ խումբը, որի ճիշտ լուծման խնդիրը դրած է եղել իր առջև բառարանը կազմող կոլեկտիվը:

Նշված բառարանի և առհասարակ որևէ բառարանի հաշտված լինելու մասին դժվար է վերջնական կարակարգության գալ նրա հետ միայն ծանոթանալով կամ մանրակրկիտ ընթերցելով այն: Բառարանի կազմման, նրա մեջ ընդունված բառացանկի, ընդգրկված տերմինների ու դրանց բացատրության հաշտ լինելու մասին կարելի է վերլուծում տալ տվյալ բառարանի հետ կրկարատե անմիջական աշխատանքի պայմաններից կելնելով: Մենք այդ հարավորությունը առաջիկ գեան շենք ունեցել, այնուամենայնիվ, ծանոթանալով հրատարակված «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանի» հետ, կարելի է նախապես ասել, որ այն խնդիրները, որոնք դրված են կողմ կազմող կոլեկտիվի առաջ, հիմնականում իրենց լուծումը ստացել են: Փորձենք համառոտակի կանգ առնել ու վերլուծել նշված խնդիրներից այն մի քանիսը, որոնք սկզբունքային նշանակություն են ունեցել բառարանի կազմման ժամանակ:

Դրանցից կարևորագույններից մեկը, որը կարելի է ասել նշանակալից ամանդ է հանդիսացել ինչպես այս բառարանի, այնպես և այնուհետև կազմվող հայերեն բառարանների համար, դա նոր կազմված տերմինների ներդրու-

մբն է մեր լեզվի մեջ: Այդպիսի տերմինները իրենց ուրախ տեղն են գրավել բառարանում: Կարելի է ստանց վարանելու նշել, որ գրանց գերակշռող մասը հաջողված տերմիններ են, որոնք, անկասկած, լայն ճանապարհ կունենան տեխնիկական կյանքում քաղաքացիություն ձևեր բերելու համար: Այդպիսի տերմիններից կարելի է նշել կաղապարամած—опалубка, որի փոխարեն նախկինում գործածվում էր տախտակամած բառը: Սակայն վերջինս ճիշտ չի արտահայտում և ունի նշանակություն՝ палуба (օրինակ, նավի տախտակամած): Մինչդեռ նոր տերմինը՝ կաղապարամածը, կազմված լինելով կաղապար բառից, «մած» ածանցով լիովին արտահայտում է տերմինի ճիշտ իմաստը: Բերված բովանդան լիով նոր տերմինները վերաբերում են շինարարական մասնագիտությանը՝ կառուցապատում—застройка, շաղվածք—замес, հարկայնություն, հարկանիություն—этажность և այլն: Կան և շատ այլ տերմիններ տարրեր մասնագիտություններին վերաբերող. ինչպես օրինակ՝ կենտրոնագրում—центрирование, սանուղի—салазки, բանիչ—пускатель, զատարկամիջություն—пустотность, ողողահուն—пойма, ներպարուրակիչ—метчик և այլն:

Նոր տերմինների մեջ կան մի ամբողջ խումբ բառեր, որոնք մոտիկ լինելով հնում օգտագործվող նման տերմիններին, ունեն բոլորովին այլ իմաստ, օրինակ՝ միջապատ, որը նշանակում է простенок, շատ նման է միջնապատ տերմինին, սակայն որը կնշանակի перегородка, կամ թե ջերմածք (отепление) ի տարբերություն ջեռուցումի (отопление), կտրուք—вырез, փոխանակ կտրածքի (срез), կամ մի այլ ուրիշը՝ բեկուն—хрупкий, փոխանակ սխալմամբ գործածվող փխրունի, որը կնշանակի рыхлый և այլն:

Վերը նշածից զատ բառարանում արված են տեխնիկական լեզվում մինչև այժմ պակասող բազմաթիվ նոր բառեր, որոնք ընդհանուր առմամբ կազմված են ճաշակով և հայերենի բառակազմության կանոններին համապատասխան, օրինակ՝ կիզվածք, այրուք (нагар), մաշակայուն, մաշաղիմացիուն (износостойкий), կռանսում, կռանսավածք (уковка), կամ թե выработка բառի մի քանի տերմինների հետ միասին և պարապուտ (օգտագործված վայր) և այլն բառեր: Կարելի է հաջողված համարել նաև մի ամբողջ շարք փոփոխադարձական բառերի տերմինաշինության մեջ օգտագործելու փորձը: Նման բառերը իր ժամանակին, իհարկե, օգտագործվելիս են ևզել և այժմ էլ օգտագործվում են մեր սօսրա կյանքում և ահա գրանցից շատերը ընդգրկված են բառարանի մեջ ուղղված և ճշտեցված ձևով: Դրանց մի որոշ մասը ընկնում է նյութերի տեխնոլոգիայի՝ միամեղմում—отпуск, եռակալում—спекание, մարմանգանում, դանաում—томление և այլն: Կան և այլ մասնագիտություններին վերաբերող բառեր՝ հովան—охладитель, գլխանք—отсев, փարդախա (վերնասվաղ)—накрявка, կամ ընդհանուր ախպիսի տերմիններ, ինչպիսիներն են դիր—крутой, սղոլունություն—скользкость:

Նոր տերմինների ստեղծմանը զուգահեռ պետք է որպես գրական երեւոյթ գիտել կապակցական (հարադիր) տերմինները հայերենում մեկ բարդ տերմինով առու փորձը, այլ խոսքով մեր լեզվի բարդություններ կազմելու մեծ հնարավորությունների օգտագործումը: Ռուսերենում գործածվող մի շարք հարադիր բառերի փոխարեն մենք բառարանում տեսնում ենք առամնանիվ (зубчатое колесо), կեռաշղթա (крючковая цепь), սևամշակում (черновая обработка) և այլն:

Բառարանում մեծ ուշադրություն է դարձված հարևան տերմինների մի ամբողջ շարք իրար շատ մոտիկ նշանակություն ունեցող բառերի նշաման գրառնման բառերը խոսակցական և անզամ գրավոր լեզվում մինչև այժմ էլ գործածվում են շիտի՞ ձևով: Կարելի է մեջ բերել նման տերմինների բազմաթիվ օրինակներ, որոնք հատկապես հանդիպում են շինարարական մասնագիտությունը վերաբերող տերմինների մեջ, այդպիսիներից են՝

ձածկ, վերնածածկ, կուռ, տանիք—перекрытие, покрытие, крыша, кровля.

խիճ, կոպիճ, Եպարար, գեպարար, գարար—щебенъ, гравий, галька, булыжник, валун.

հենապատ, ամբարտակ (պատվար), պատնեշ, ջրաթուփ—подпорная стена, плотина, запруда, дамба.

կառուցվածք, կազմ (բաղադրություն), կազմություն—сооружение, состав, структура (строение):

Կարելի է, իհարկե, բերել նման շատ օրինակներ այլ մասնագիտություններից, ինչպես՝

մակերես, մակերևույթ, մակարդակ—площадь, поверхность, уровень, հեղեղատ, անրակ, անր—балка, овраг, ущелье:

Ներկա բառարանի կազմման ժամանակ բավականին աշխատանք է տարված սուսերենում մոտիկ նշանակություն ունեցող տերմինների նկատմամբ մասնագիտական ուղղությամբ, որոնք մինչև այդ մյուս գրավոր աղբյուրներում գործածվելիս են եղել ոչ նկատմամբ: Իհարկե գրանցից մի քանիսը արդեն նշված ձևով՝

огнестойкий—հրակայուն, огнеупорный—հրանիստ, жаростойкость—հրակայունություն, жароупорность—հրանիստություն, կամ մի այլ տերմինաբանում՝ իր օգտագործման մի շարք մասնավոր դեպքերով.

тяж—1. ձգանակ, ձգան. 2. ձգափող. ТЯГА—1. զուռի (ճարարապետական), 2. ձգանող. 3. քարշ (երկաթուղային). 4. քաշանք, ձգանք (ծխնիւղղի), ОТТЯЖКА—1. ձգիչ, ձգավար. 2. կռանգում, կռանգվածք. 3. ձգում, ետանգում. ЗАТЯЖКА—1. պրկում, 2. պրկան. РАСТЯЖКА—(կաշեգործության մեջ) 1. առանգում, 2. առանգիչ. ПРОТЯЖКА—1. միջանգիչ, 2. միջանգում:

Նման բառերի նկատմամբ մասնագիտական կրթված հեղինակները սպառնում են հայերեն տերմինի աննշան փոփոխությամբ, այսպես օրինակ՝ ДОПУСК—բույլվածք, пропуск—բողվածք, կամ մի այլը՝ СКВОЗНОЙ—միջանցիկ, проходной—միջանցուկ, пропаривание—շոգեարկում, запаривание—շոգեհարում և այլն: Ճշգրտված ու գիտնականացված են իմաստով միմյանց մոտ կանգնած տերմինները, օրինակ՝ կանգնակ—стойка, կանգնուկ—стояк, առամնակիվ, ժանակիվ—зубчатое колесо, առամնակիվակ—шестерня: Ելույթ, կուռսա ստորական բառերի փոխարեն բառարանը տալիս է կուռք բառը ВЫХОД բառի հատուկ իմաստով (այսինքն զուս արդյունք, արտադրված պրոդուկտի զուս քանակ): Անկասկած նկատ է տեղային բառի կիրառումը տեղական բառի փոխարեն, այն բոլոր դեպքերում, երբ местный բառը գործ է ածվում ոչ թե վարի՞ տերիտորիայի, այլ ամբողջի որևէ մասի իմաստով (տեղային ֆրասիամբ):

Տպագրված նոր պոլիտեխնիկական բառարանում, ինչպես բառացանկի հավաքման, այնպես և բառարանի կազմման ընթացքում հեղինակները աշու-

չորը մոտեցում են ցուցաբերել մի շարք սխալ թարգմանությունների նկատմամբ, ճշտելով դրանք: Նման սխալ թարգմանությունները, որոնք տեղ էին գտել մի շարք սուս-հայերեն բառարաններում, հիմնավորվել էին մեր լեզվում, գործածվում էին գրականության մեջ, պարբերական մամուլում: Նման օրինակներից է АВТОКРАН—ավտոամբարձիչ տերմինը, որը սուս-հայերեն հրատարակվող քառահատոր բառարանում սխալ կերպով թարգմանված է ինքնաձորակ, ինքնակառուցի (?) կամ մի քանի այլ նման տերմիններ՝ КРАН—ամբարձիչ և ոչ թե կառուցի կամ վերամբարձ, рабочий чертеж—աշխատանքային (և ոչ թե բանվորական) գծագիր, рабочая смесь—բանող (և ոչ թե բանվորական խառնուրդ), толстая глина—վախա (և ոչ թե նիհար) կավ, жирная глина—պարարա (և ոչ թե գեր) կավ և այլն:

Չի կարելի կոնց շահնել նաև այնպիսի մի հանգամանքի վրա, որին մեծ ուշադրություն է ցուցաբերել բառարանը կազմող կոլեկտիվը: Այստեղ բացահայտված են սուսերեն տերմինի տարրեր իմաստները, որոնք հայերենում արտահայտվում են տարրեր բաերով: Բերենք վերոհիշյալը պարզաբանող մի քանի օրինակներ. бесконечный—1. անվերջ, 2. ծայրափակ (որինակ бесконечная цепь—ծայրափակ շղթա), вязкость—1. մածուցիկություն, 2. նյություն (օրինակ՝ вязкость цементного теста—ցեմենտախմորի մածուցիկություն), իսկ մյուս դեպքերում արդեն ինչպես երկրորդ իմաստի պետք է թարգմանվի, օրինակ՝ вязкость дерева—փայտի նյություն, пологий—1. քերպուն, սակավաբեր (օր՝ սանդուղք), 2. ցածրակոր, տափախավուն (օր՝ կամար), перспективный—1. հեռանկարային (օր՝ պլան), 2. հեռանկարավոր (օր՝ հանքավայր): Բերենք մի այլ բառի օրինակ, որտեղ սուսերենի մի տերմինի փոխարեն հայերենում ունենք տարրեր մասնազիտությունների մեջ տարրեր բացատրություններ, զա ձեռեղջ բառն է. сцепление—1. կցորդում (ավտոմեքենայի մեջ), 2. հարակցում, շաղկապում (օգտագործվում է շինարարական տեխնիկայում ինչպես օրինակ՝ շաղախի և քարի շաղկապում), 3. կցորդիչ, 4. հարակցություն, 5. կցում (օրինակ՝ մեքենաշինության մեջ сцепление дышло—կցման առև): Կարելի է բերել այլ օրինակներ, որոնք վերաբերում են այս կամ այն մասնագիտությունը և տարրերում են իրենց նշանակությունը կամ երանգով, օրինակ՝ закладка—1. լցում, լցանյութ, 2. ներդրում, հիմնարկում, проходимость—1. անցունակություն (ավտոմեքենայի), 2. անցանելիություն (ճանապարհի), набивка—1. ներլիցք || ներլցում, 2. խծուծվացք, խծուծք, портал—պորտալ || շքամուտք || նախաամուտք և այլն:

Բառարանում հաջողված երևույթ պետք է համարել օտար բառերի դործածության շրջանակը հնարավոր չափով նեղացնելու փորձը, այստեղ նման օտար բառերը փոխարինվել են համապատասխան հայերեն բառերով—օրինակ՝ կեմենա բառը, որի բուր իմաստները արտահայտվում է հայերեն աարր տերմինով, փոխարինված է վերջինով (գալվանական աարր, աարրական փոխանցում, ֆունկցիայի աարր և այլն): Կամ մի ուրիշը՝ ֆուտո բառը բարդ բառերի մեջ մեծ մասամբ փոխարինված է լուսա բառարմատով, կազմելով օրինակ լուսաչափ, լուսահոսանք և այլն:

Հետաքրքիր է, որ բառարանում առաջին քայլերն են կատարված օտար տերմինների հայերեն թարգմանության մեջ նրանց ունեցած ածականական ակն և իկ վերջավորությունների գործածությունը հիմնավորված եղանակով

տարու ուղղութիւնը: Այսպես, օրինակ, այն դեպքում, երբ օձականը ցույց է տալիս առնչութիւն ազլալ երևույթի հետ, ապա վերցվում է ական օձականական հայերեն վերջավորութիւնը՝ կայունութեան դինամիկական կորուստ (динамическая потеря устойчивости), ճիգրավիկական աշխատանքներ (гидравлические работы) և այլն: Մյուս դեպքում, երբ օգտագործվող օձականը արտահայտում է այդ երևույթի էությունը—նպատակահարմար է համարվել վերցնել իկ վերջավորութիւնը: Բերենք վերևում գործածված բառերի վրա կազմվող օրինակներ. դինամիկ կայունութիւն (динамическая устойчивость), ճիգրավիկական (гидравлический) և այլն: Իհարկե, նշված սկզբունքը յարաբանչուր դեպքում չէ, որ նմարավոր է անխախտ հետևողականութեամբ կիրառել, որոշ դեպքերում դժվարութեամբ կարելի է կողմնորոշվել, թե առավելութիւնը նմարավոր երկու վերջավորութիւններից որ մեկին պետք է տալ: Անուամենայնիվ կարծում ենք, որ սպազայում այս սկզբունքը կարող է մնալ և ամբանալ մեր անխնդիրական լեզվի մեջ:

Վերջացնելով մի շարք հարցերի շարադրումը, ավելորդ չէ նշել և այն մասին, որ վերջինումս իրենց ճիշտ թարգմանական ձևով են արված սուսերենում գործադրվող այն բազմաթիվ տերմինները, որոնք, կազմվելով в, на, к, при նախդիրների օգնութեամբ սրոշակի դժվարութիւն են ստեղծում հայերեն թարգմանութեան ժամանակ: Հեղինակները այս դեպքում ճիշտ են վարվել այդպիսի բառերը որոշ դեպքերում թարգմանելով հայերեն բարդ բառերով, օրինակ՝ проба на искру—կայծափորում, կամ էլ օգտագործելով սեռական և գործիական հորջները, օրինակ՝—испытание на изгиб—ձաման փորձարկում, соединенне на стык—կցվածքով միացում և այլն:

Բառարանում նշված է տերմինների տառադարձութիւնը, երևելով փոխառյալ լեզվի այլալաներից. օրինակ՝ կաթող (և ոչ թե կատող), հերց (և ոչ թե գերց), хемисорбция—քեմիսորբցիա, ինչպես և կարգավորված են քեմիստիկան մի շարք տերմիններ, որոնք ըստ իրենց ձևի տարբերվում են սուսերենից, օրինակ՝ медь сернистая—պղնձի սուլֆիտ, свинец хлористый—կապարի երկլորիդ, свинец хлорный—կապարի քառարլորիդ և այլն:

Հայերեն լեզվով պոլիտեխնիկական բառարան կազմելու այս առաջին փորձը վերջ չէ և թերութիւններից, որոնց ուղղումը բառարանի հետագա վերահրատարակման ժամանակ միայն և միայն կրարձրացնի նրա որակը: Փորձենք կանգ առնել տեղ գտած մի քանի թերութիւնների վրա: Բառարանում ոչ բոլոր դեպքերում է բնագրված ազլալ բառով կազմված տերմինների լրիվ ցանկը, օրինակ՝ տալով палубник—մածառախաակ, палубный шов—հաաակայիկ կարան, նրանում բացակայում է ինքը палуба (աախաակամ) բառը, որը բերված առաջին տերմինի արմատն է հանդիսանում, իսկ մյուս կազմովի տերմինի՝ մասը: Կամ թե բերելով жаростойкость—կրակակայունութիւն և жаростойкий—կրակակայուն բառերը, դրանց կողքին մի այլ՝ огнеупорный—հրանետ բառը արված է իր մի ձևով, մոտացութեան տալով բնագրիկու նաև огнеупорность—հրանետութիւն բառը: Մի այլ դեպքում բառարանում բերելով плоскость բառով կազմված 42 տերմին ու կապակցութիւն, բաց է թողնված плоскостность բառը: Նույն կերպ է վարված՝ բաց թողնելով микрогеология բառը:

Վերահիշելից զատ բառարանում որոշ դեպքերում բաց են թողնված

ախպիսի շատ գործածական բառեր, ինչպիսիներն են՝ ордината, стандарт, индекс կամ թե նորից շատ պետք էկող изготовление, проскользывание բառերը: Մտապլած է բառացանկում ընդգրկելու հետուսացույց, ուղղաթիւ և նման նոր բառերը, որոնք արդեն տեղ են գտել մեր լեզվում, ինչպես և բերելու նորագույն տեխնիկային վերաբերող ախպիսի արդեն հաճախ օգտագործվող տերմիններ, ինչպիսիներն են циклофазотрон, термоядерный процесс և այլն:

Որոշ այլ տիպի թիրախներին հետ միասին բառարանում տեղ են գտել մի շարք բառերի ու կապակցությունների՝ օրինակ елжалость, знак формы, залбанд лежащего бока և այլնի սխալ թարգմանությունները: Հանդիպում ենք նաև մի շարք բառերի ու տերմինների անհաջող թարգմանությունը, գրանցից օրինակ՝ միջաձգում (протягивание), գելում (приработка), սղոցաքերք (полотно пилы) և այլն:

Բառարանում որոշ բառերի թարգմանությունը տրված է չափից ավելի ընդլայնված ձևով և կամ հակառակ՝ բերված է նեղացված իմաստով, օրինակ՝ безоловянная бронза և неоловянная бронза տրված է նույն թարգմանությունը անհնազող բրանց, կամ թե почвенная вода և грунтовая вода միևնույն գեանաչուր բառով և այլն:

Թիրախյուն պետք է համարել, որ բառարանում միևնույն սուսական տերմինի տարբեր նշանակությունները ապլիս միշտ չէ որ օրինակներով բացատրվում են թե հայերեն այս կամ այն նշանակությունը որ շեղքում պետք է գործածել. օրինակ տրված է лом—1. լինգ, 2. ջարդվածք, 3. ջարդուկ, սահալն բացաարող օրինակներ չկան և ընթերցողին է մտած կռահել, թե ավել ղեղքում բերված երեք թարգմանություններից որը պետք է կիրառել: Կամ մի այլ օրինակ՝ тумба—1. կարեսայուռ, 2. պատվ սնգան, 3. անվարգել, 4. բումբ, նախպես բերված է առանց բացատրող օրինակների: Կան ղեղքեր, երբ նշանակություններից մեկի համար օրինակներ տրված են, իսկ մյուսների համար՝ ոչ. օրինակ՝ обделка—1. երեսամշակում, 2. երեսարկում, 3. երեսամշակվածք, երեսարկ, իսկ բացատրված է միայն երկրորդը՝ բուննի երեսարկում, կամ մի այլ բառ՝ проход—1. երբանցք, անցք, 2. արանք, 3. անցամաս, անց. բերված է օրինակ միայն երրորդի համար՝ գլղանի անցք և այլն:

Բառարանում վերը նշածներից դատ անշուշտ տեղ են գտել նաև մի շարք վիճարկելի թարգմանություններ ներկայացրած տերմիններ և տերմինային կապակցություններ: Սակայն վերջիններիս վրա մենք կանգ չենք առնում և կարծում ենք, որ նրանք պետք է ուղղվեն ու սղարգվեն, հախանարար, լեզվի մասնագետների անմիջական միջամտությամբ: Վերջացնելով մեր սույն ոչ ծավալուն գրախոսականը պոլիտեխնիկական բառարանի լույս բնծայման կապակցությամբ, մենք կցանկանալինք նրա հաջորդ հրատարակության ժամանակ այն տեսնել նշված թիրախները վերացված և, որ ոչ պակաս կարևոր է՝ ստվարացած, որտեղ ընդգրկված կլինեն 40—45 հազար տերմին և տերմինային կապակցություն:

Շինանյութերի միևնույնության
Շինանյութերի և կառուցվածքների
գիտա-հետազոտական ինստիտուտ

Մատցված է 10 II 1958